

Ոստիկանության պետ Ռոբերտ Մ. Կասարոյի հայտարարությունը

«Գլենդելի Ոստիկանության վարչությունը չունի ո՛չ լիազորություն, ո՛չ պատասխանատվություն՝ կալանավորելու կամ ձերբակալելու անձանց միայն ներգաղթի կարգավիճակի հիման վրա: Մեր հիմնական պարտականությունները հիմնված են հասարակական անվտանգության վրա՝ ծառայելով համայնքին, մինչդեռ ջանքերը հիմնականում ուղղված են հանցագործությունների կանխմանը և օրենքի իրականացմանը: Մեր պարտականությունն է՝ պաշտպանել այն համայնքի կյանքը, որին մենք երդվում ենք ծառայել, և հարգել ժողովրդավարության սկզբունքները, որոնց հիման վրա կառուցվել է այս երկիրը»:

Policy 415 | Գլենդելի Ոստիկանության վարչության դերը ներգաղթի հարցերով հետաքննության եւ օրենքի կիրառման մեջ

415.1 ՆՊՏԱՍԿԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

- Այս քաղաքականությունը բացատրում է այն գործողությունները, որ Գլենդելի ոստիկանությունը պետք է և չպետք է իրականացնի՝ ներգաղթի հարցերով օրենքների հետաքննման և կիրառման ժամանակ:

415.2 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Օրենքի հավասար իրագործումը կարևոր պարտավորություն է: Սպաները վստահ են այս պարտավորության մեջ, ինչը թույլ է տալիս նրանց պաշտպանել, ծառայել եւ ճանաչել բոլոր անձանց արժանապատվությունը՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:

415.3 ԻՆՉՊԵՍ Է ԳԼԵՆԴԵԼԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ (GPD)

ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒՄ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ և ՎԿԱՆԵՐԻ ՀԵՏ

- GPD-ի սպաները ապահովում են, որ անհատները, անկախ իրենց ներգաղթի կարգավիճակից, իրենց ապահով զգան՝ դիմելու կամ հասցեագրվելու իրավապահ մարմինների կողմից:

415.4 ԻՆՉՊԵՍ Է ԳԼԵՆԴԵԼԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ (GPD) ՎԱՐՎՈՒՄ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԿԱՄ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՆԵՐԳԱՂԹԻ ԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Ներգաղթի խախտումների մասին GPD- ին զեկուցող հանրության անդամներն ուղղորդվում են Ներգաղթի և մաքսային օրենքի կիրառման բաժին (ICE):

415.4.1 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԸՆԴԴԵՄ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԽՏՈՒՄՆԵՐԻ (սահմանումների համար հղում անել ամբողջական քաղաքականությանը)

415.4.2 ՆԵՐԳԱՂԹԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

- Միայն երեք տեսակի սպաներ կարող են հարցնել կարգավիճակի մասին՝ դաշնային կառավարության լիազորված իրավապահները, Ներգաղթի և մաքսային օրենքի կիրառման բաժինը, ԱՄՆ-ի Մաքսային և սահմանային պաշտպանությունը:
- Ոչ մի անհատ չպետք է շարունակի ձերբակալված մնալ՝ անհատի կարգավիճակի վերաբերյալ չլուծված հարցերի պատճառով:

415.4.3 ՎԵՐԱՀՄԱՉԻ ՊՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (հղում անել պատասխանատվությունների ամբողջական քաղաքականությանը)

415.5 Ե՛ՐԲ Է GPD-Ն ԾԱՆՈՒԹՅՈՒՄ ICE-ԻՆ?

- GPD-ը չի տեղեկացնում ICE-ին, երբ ձերբակալվածներին գրանցում է վարչաշրջանի բանտում: GPD-ը կարող է տեղեկացնել ICE-ին, երբ ոստիկանը ձերբակալել է թմրամիջոցների թրաֆիքինգի իրավախախտման համար:

415.7 ԿԱՐՈՂ Է ԱՐԴՅՈՔ GPD-Ը ԴԱՇՆԱՅԻՆ ԻՐԱՎԱՊԱՀ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼ

- GPD-ը կարող է կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն ուղարկել կամ պետական մարմիններին կամ նրանց կողմից ստանալ կամ ուղարկել տեղեկատվություն:

415.7.1 ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀՈՒՄՆԵՐ

- GPD-ի քաղաքականությունն է՝ քաղաքացիական ներգաղթի խախտման համար որևէ մեկին կալանքի տակ չպահել:

415.7.2 ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴԱՇՆԱՅԻՆ ՕՐԻՆԱՊԱՀ ՄԱՐՄԻՆԸ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ Է ՈՒԶՈՒՄ

- GPD-ը տրամադրում է գրավոր համաձայնության ձևաթուղթ՝ հարցազրույցի նպատակը բացատրելու համար, որ հարցազրույցը կամավոր է, և անհատը կարող է հրաժարվել դրանից:

415.7.3 GPD-Ը ԱՆՁԱՆՑ ՏԵՂԵԿԱՅՎԱԾ Է ՊԱՀՈՒՄ

- GPD-ին պետք է տրվի ICE-ի կողմից ստացված փաստաթղթերի պատճենը՝ կապված կալանքի տակ պահելու, ծանուցման կամ փոխանցման հարցման հետ, GPD- ի՝ ICE- ի պահանջին ենթարկվելու կամ չենթարկվելու մտադրության հետ միասին:

415.8 Ս ԱՐՏՈՆԱԳԻՐ և T ԱՐՏՈՆԱԳԻՐ

- GPD-ը կարող է ժամանակավոր ներգաղթային արտոնություններ տրամադրել՝ տալով Ս արտոնագիր տուժածներին և որոշ իրավասու հանցանքների վկաներին, կամ T արտոնագիր՝ մարդկային թրաֆիքինգի որոշ իրավասու տուժածներին:

415.9 ՈՎ Է ՆԵՐԳԱՂԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՍՏԱՆՈՒՄ

- GPD-ի բոլոր համապատասխան անդամները ստանում են ներգաղթի վերաբերյալ վերապատրաստում

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ԳԼԵՆԴԵԼԻ ՈՍՏԻԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ Քաղաքականության ձեռնարկ, բաժին 415.1